

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-ԻՆ
ԺԱՄԸ 15:10-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

| | |
|------------------|--|
| Վ. Ավանեսյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Ա. Աշոտյան | ՀՀ կրթության և գիտության նախարար |
| Վ. Գաբրիելյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |
| Ս. Հարությունյան | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ |
| Գ. Մուրադյան | ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ |
| Ա. Գալստյան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ |
| Ա. Կարապետյան | ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ |
| Կ. Արեյան | Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ |
| Ա. Միրզախանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ |
| Ս. Տոնոյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար |
| Ս. Սիմոնյան | ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ |
| Մ. Խաչատրյան | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի տեղակալ |
| Զ. Առաքելյան | Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ |
| Հ. Թոքմաջյան | «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ղեկավար |

| | |
|----------------|---|
| Ֆ. Նախշքարյան | «Գոլոս Արմենիի» թերթի գլխավոր խմբագիր |
| Դ. Պետրոսյան | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի պրոռեկտոր-գիտական կենտրոնի տնօրեն |
| Վ. Սահակյան | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե |
| Ա. Սաղիյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն |
| Ս. Դադայան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ |
| Լ. Ներսեսյան | Ա. Բ.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ |
| Ա. Մարգարյան | ՀՀ կրթության և գիտության նախարարության Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան |
| Ա. Սիմոնյան | ՀՀ կրթության և գիտության նախարարության Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան |
| Վ. Թոքմաջյան | ՀՀ կրթության և գիտության նախարարության Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան |
| Ա. Կարախանյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ |
| Ռ. Վարդապետյան | ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի խորհրդական՝ Եվրոպական միության հետ գիտական և գիտատեխնոլոգիական համագործակցության հարցերով |

1. Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված նախագծերի մրցույթի արդյունքների մասին

- 1) Ավտոմատ գործողության դիմհարային փականի նախատիպ
- 2) Ոչ սպիտակուցային ամինաթթուների պրեպարատիվ արտադրության տեխնոլոգիական պարամետրերի օպտիմալացում, արտադրական նմուշների (50 անվանում) ստացում և սերտիֆիկացում, փոքրածավալ արտադրության կազմակերպում
- 3) «ԼԱ-2» ժանգի ձևափոխիչի ստացման տեխնոլոգիայի մշակում
- 4) Սեյսմոլոգիական և գեոդինամիկական փորձադաշտի ստեղծում Գառնիի ակտիվ խզվածքի սեզմենտներում

(Ս. Հարությունյան, Ա. Մարգարյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ Էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝

ա. ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի, միջազգային փորձագետների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ քննարկել Ավտոմատ գործողության դիմհարային փականի գյուտի առևտրայնացման հնարավորության հարցերը և ներկայացնել առաջարկություն,

բ. համապատասխան ճյուղային նախարարների, միջազգային փորձագետների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկել ինովացիոն ծրագրերի գծով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված՝ լավագույն 9 ծրագրերը և ներկայացնել դրանց առևտրայնացման վերաբերյալ մասնագիտական եզրակացություն.

2) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանին՝ հիմք ընդունելով Ավտոմատ գործողության դիմհարային փականի նախատիպի վերաբերյալ իրենց դրական եզրակացությունը՝ քննարկել ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի միջոցների հաշվին արտերկրում Ավտոմատ գործողության դիմհարային փականի արտոնագրման գործընթացի ֆինանսավորման հնարավորությունը:

2. ՀՀ վարչապետի մոտ 2013 թվականի փետրվարի 1-ին կայացած Գիտատեխնիկական խորհրդի նիստի հանձնարարականների մասին

2.1. Գիտության արդյունքների առևտրայնացման կենտրոնի ստեղծման նպատակահարմարության մասին

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝ մրցույթի պայմանների մեջ հստակ նշել պետական բյուջեից միջոցների կամ երաշխիքների չտրամադրման մասին, որը կհամապատասխանի ծրագրի առևտրայնացման (ամբողջությամբ մասնավոր ներդրողների ֆինանսավորման) գաղափարին:

2.2. Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին քիմիայի զարգացման հնարավոր ուղղությունների վերաբերյալ «Ի-Վի քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության հետ համատեղ քննարկման արդյունքների մասին

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝ ուսումնասիրության համար պահանջվող ֆինանսավորումն իրականացնել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի միջոցների հաշվին:

2.3. «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի զարգացման ծրագիրը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինտեգրացման գործընթացի ներքո ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ քննարկելու վերաբերյալ հանձնարարականի կատարման ընթացքի մասին

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանի զեկուցումը՝ «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի զարգացման ծրագիրը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ինտեգրացման գործընթացի ներքո ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ քննարկելու վերաբերյալ հանձնարարականի կատարման ընթացքի մասին.

2) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝ հետագայում ներկայացնել «Նյութա-

բանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ-ի զարգացման վերաբերյալ առաջարկություններ:

3. Բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության բարձրացման իրավական հիմնախնդիրների մասին

(Գ. Մուրադյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ քաղաքաշինության նախարար Ս. Թադևոսյանին, «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ռեկտոր Հ. Թոքմաջյանի, առաջարկված մոդելի հեղինակ Միքայել Մելքումյանի և համապատասխան ուրիշ մասնագետների մասնակցությամբ կազմակերպել կլոր-սեղան քննարկում և արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

4. Եվրոպական Միության Գիտատեխնոլոգիական և ինովացիոն զարգացման «Հորիզոն 2020» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության հնարավորությունների վերաբերյալ

(Ռ. Վարդապետյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վ. Ավանեսյանին՝ մինչև 2013 թվականի սեպտեմբեր ամիսը՝ ԵՄ-ի ներկայացուցիչների հետ քննարկել և նախապատրաստել ՀՀ-ի և ԵՄ-ի միջև համապատասխան փոխըմբռնման հուշագրի նախագիծ ու ներկայացնել ստորագրման:

5. Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցի մասին

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հավանություն տալ Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրի և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցին:

6. Ընթացիկ հարցերի և հաջորդ նիստի օրակարգի վերաբերյալ

(Ս. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Ս. Հարությունյանին՝

ա. գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգերի նախագծերի փաթեթը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ,

բ. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռ. Մարտիրոսյանի և ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանի հետ համատեղ, մինչև ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծի կազմումը, ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ առանձին քննության առնել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի բյուջետային հատկացումների համամասնությունների, ինչպես նաև գիտության ֆինանսավորման խնդիրները.

2) ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ ուսումնասիրել գիտության ոլորտի ֆինանսավորման նոր կարգերի նախագծերի փաթեթը և խնդրահարույց հարցերը ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ